# Թուրքական մամուլ



# Հեմշինցիները հա՞յ են

## Թուրքերեն հոդված մահմեդական համշենցիների մասին

*Այս ընթացքում, երբ «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը շարունակում է վերլուծությունների տաք նյութ մնալ սփյուռքի եւ հայաստանյան մամուլում, ցանկանում եմ հիշել «Ակօսի» հետ համագործակցության դրվագներից մեկը: «Ակօսը» Թուրքիայում իր հայապահպան դժվարին առաքելությունից զատ փորձում էր հայերի մասին թուրքական մամուլում հրապարակվող քիչ թե շատ անկողմնակալ հոդվածները ծանոթացնել նաեւ մեզ: Այդպես «Ակօսից» ստացանք թուրքական հայտնի «Ռադիկալ» թերթի այն համարը, որում տպագրվել էր Թուրքիայում բնակվող մահմեդական համշենցիների մասին հոդված: Համշենյան գյուղական պատկեր ներկայացնող լուսանկարի վրա հստակ գրված էր «Հեմշինցիները հա՞յ են» հարցը, որի դրական պատասխանը տալիս էր հրապարակվող հոդվածը, որում օգտագործվել էին մի քանի գիտական աղբյուրներ: Եվ խմբագրությունը, ըստ երեւույթին ցանկանալով շեշտել, որ այն գիտական հոդված չէ, այլ լրագրողական, աստղանիշով ծանոթագրել էր, որ հեղինակը՝ Ջան Ուղուր Բիրյոլը լրագրող է, ուրեմն, ինչ-որ չափով ազատ իր լրագրողական կարծիքը հայտնելու: Հոդվածը տպագրվել է 2005թ. հունիսի 12-ին, բայց ոչ միայն չի կորցրել կարեւորությունը, այլեւ այս օրերին, երբ թուրք հասարակությունը փորձում է գտնել իր անցյալին եւ այդ անցյալում հայերի դերին վերաբերող մի շարք հարցերի պատասխաններ, ավելի է կարեւորվում: Կարծում ենք, որ «Մենք բոլորս հայ ենք» պաստառներով քայլող թուրքերի մի մասն իսկապես ծագումով հայ է, եւ վաղուց է հասունացել այդ մասին բարձրաձայն ասելու ժամանակը:*

*«Ազգի» ընթերցողներին ենք ներկայացնում «Ռադիկալի» հոդվածը, որի թարգմանությունը սիրով ստանձնեց Երեւանի պետհամալսարանի թուրքագիտության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Սահակյանը, որին հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:*

*Թարգմանության մեջ անփոփոխ են թողնվել անվանումների թուրքերեն տարբերակները, որպեսզի ընթերցողն իմանա, թե դրանք թուրքերեն ինչպես են հնչում՝ հեմշինցի (հայ.՝ համշենցի), Հեմշին (հայ.՝ Համշեն), Քաչքար (հայ.՝ Քաջքար), Հոպա (հայ.՝ Խոփա):*

Սերգեյ ՎԱՐԴԱՆՅԱՆ,
«Ձայն համշենական» ամսաթերթի գլխավոր խմբագիր

ՋԱՆ ՈՒՂՈՒՐ ԲԻՐՅՈԼ*

## ՀԵՄՇԻՆՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ...

*Նախընտրում եմ, որ հեմշինցիները մնան որպես Սեւ ծովի լեռներում*
*առեղծվածային կյանք վարող մի ժողովուրդ, քան թե պարփակվեն*
*որեւէ պատկանելության շրջանակում...*

Հեմշինն այն անունն է, որ տրվում է Ռիզեի Չամլըհեմշինում եւ Փազար-Հեմշինում, այդ թվում եւ Արդվինի Քեմալփաշայում գտնվող բնակավայրերին եւ այնտեղ ապրողներին: Հեմշինը /հեմշինականությունը/ մի ընդհանուր մշակույթ ունեցող եւ բարձր սարերում ապրող մարդկանց է ներկայացնում (1):

Շրջանները, որտեղ ապրում են հեմշինցիները, չեն սահմանափակվում միայն Սեւ ծովի արեւելքով: Հայտնի է, որ հեմշինցիները պանդխտության եւ հին արտագաղթերի պատճառով ապրում են նաեւ Թուրքիայի մի շարք այլ շրջաններում, Սեւ ծովի արեւմտյան կողմում եւ Էրզրումի սահմաններում:

Սեւ ծովի արեւելք ասվելուն պես առաջին մտաբերվող վայրերից մեկը Չամլըհեմշինն է, որը հիմնվել է Սեւ ծովի հարակից ամենաբարձր կետի՝ Քաչքար լեռան փեշերին, Թավրիզ-Տրապիզոն մետաքսի ճանապարհի կարեւոր մի անցակետում:

Քանի որ Փազարի Հեմշինի գավառակում ապրողների մեծամասնությունն անասնապահությամբ է զբաղվում Չամլըհեմշինի սահմաններում գտնվող ամառային արոտավայրերում, այդ իսկ պատճառով երկու Հեմշինների միջեւ տեղի է ունեցել միաձուլում:

Իսկ հեմշինցիների Արեւելյան խումբը, որն էլ աշխարհագրորեն հեռու չի գտնվում, այնուամենայնիվ, բավական հեռու է մնում այս մերձեցումից: Թեեւ նրանք էլ ճանաչված են որպես հեմշինցիներ, սակայն առանձնապես կապ չունեն Արեւմտյան խումբ համարվող Չամլըհեմշինի եւ Փազար-Հեմշինի հետ:

### ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՄՇԻՆՑԻՆԵՐ (ՀՈՊԵՑԻ)

Պետեր Անդրյուսն իր «Էթնիկական խմբերը Թուրքիայում» գրքի «Հեմշինցիներ» բաժնում գրում է, որ Հոպա-Քեմալփաշայի կողմերում ապրողներն իրենց ճանաչում են որպես հոմշեցի: Այս Արեւելյան խմբի հեմշինցիների հիմնական բնակավայրերը Արդվինի նահանգում, Հոպայի եւ Քեմալփաշայի միջով անցնող գետային ցանցի վրա են գտնվում: Արեւելքում Ճորոխ գետը բնական սահման է ստեղծում (2):

Արեւելյան խմբի հեմշինցիների լեզուն հայերենն է: Նրանք խոսում են նաեւ արեւմտյան բարբառով եւ թուրքերենով: Շրջանի բնակիչներն ինչքան էլ պնդեն, որ խոսում են հեմշիներեն, իրականում այդպիսի լեզու չկա (3): 1990-ականներին Սարփի սահմանի դռները բացվելով՝ Ռուսաստանից դեպի Սեւ ծովի արեւելյան կողմ առաջին ժամանողները հայեր էին: Հայերը հիմնականում առեւտուր անելու համար էին Հոպա գալիս: Նկատվեց, որ տեղի բնակչության հետ լեզվական տեսանկյունից մերձենում էին: Որքան էլ ներկայումս հեմշինցիներն իրենք իրենց իբրեւ հայ չեն ճանաչում, այն լեզվով, որով խոսում են, հայերեն է, եւ որոշ աղբյուրների համաձայն՝ հայերենի մի բարբառ:

### ԱՐԵՎՄՏՅԱՆ ԽՈՒՄԲ (ԱՐՄԵՆԻ)

Արեւմտյան հեմշինցիները Չամլըհեմշինի եւ Փազար-Հեմշինի բարձրադիր հատվածներում ապրող եւ մեկ էթնիկական ինքնություն ներկայացնող ժողովուրդ են: Հարեւան լազերը այս հեմշինցիներին «արմենի» են անվանում: Ավելի տարածված դիմելաձեւը «հասակոր հայն» է: Ինչ խոսք, լազերի եւ հեմշինցիների միջեւ այդպիսի տարածված դիմելաձեւ արդեն չկա: Մրցակցությունն էլ կամաց-կամաց վերացավ, միմյանց աղջիկ տվող կամ չտվող եւ թշնամանք ունեցող այս երկու համայնքներն արդեն ավելի են մտերմացել:

Երկու ժողովուրդներին մերձեցրեց նաեւ այն, որ լազերը թեյագործության համար Հեմշինի լեռնային գյուղերն էին գալիս: Մեր օրերում Արեւմտյան հեմշինցիները թուրքերեն առոգանությամբ են խոսում եւ օգտագործում են նաեւ հայերեն բառեր: Որոշ ուսումնասիրողներ պնդում են, որ Արեւմտյան խմբի հեմշինցիները մոռացել են իրենց լեզուն, մյուսներն էլ նշում են, որ նման լեզու չկա, իսկ եթե անգամ լիներ, ապա անհնար էր մոռանալ (ինչպես օրինակ՝ լազերենը): Հեմշինցիների Արեւմտյան խումբը Արեւելյանից առանձնացնող ամենակարեւոր առանձնահատկությունները նրանց ինքնության խորհրդանիշներ դարձած հրուշակագործի եւ հացթուխի արհեստներն են:

Հեմշինցիները, որոնք այս արհեստները սովորել էին 19-րդ դարի սկզբներին Ռուսաստանի եւ Եվրոպայի որոշ քաղաքներում, այնուհետեւ վերադառնալով Թուրքիա՝ նպաստեցին թե՛ դրանց տարածմանը, եւ թե՛ դրանք օգտագործեցին արտագնա աշխատանքի դռները բաց պահելու համար: Այսօր մեծ քաղաքներում եւ անգամ Հաքքարում հայտնի փռերն ու հրուշակեղենի սրճարանները պատկանում են հեմշինցիներին:

Ճանապարհորդ Նեյլ Ասչերսոնը, որն անցել է Քաչքարի փեշերով՝ իր «Սեւ ծովը» աշխատության մեջ հանգում է հետեւյալ եզրակացության. «Քեմալիզմը՝ որպես գաղափարախոսություն, յուրացրել է 19-րդ դարի վերջում եւ 20-րդ դարի սկզբում Եվրոպայում առկա ժամանակակից ազգայնականության որոշ ծայրահեղ գաղափարներ: Միազգինությունը համարվել է հզոր եւ անկախ պետություն ձեւավորելու անհրաժեշտություն: Ելնելով այս ամենից՝ եզրակացվում է, որ այս պետությունը չի լինելու այնպիսի անհեռատես ու տարբերակված եւ գիտական ոգուն հակասող մի կառույց, ինչպիսին բազմազգ, կենտրոնախույս եւ որոշ տեսանկյուններից հանդուրժող Օսմանյան կայսրությունն էր: Գուցե լազերը՝ 250 հազարի հասնող թվաքանակով, իրենց ինքնության հարցում անվերջ զգուշավորությամբ սադրանքներից հեռու մնացին: Սակայն շուրջ 20 հազարի չափ հեմշինցիների փոքր խմբի անդամները սերում են անհայտ անցյալում մահմեդականություն ընդունած հայկական ցեղից եւ այժմ էլ հայերեն են խոսում»:

Ինչ վերաբերում է հեմշինցիների հայ լինելու կամ չլինելու քննարկումներին, ես նախընտրում եմ, որ հեմշինցիները մնան որպես Սեւ ծովի լեռներում առեղծվածային կյանք վարող մի ժողովուրդ, քան թե պարփակվեն որեւէ պատկանելության շրջանակում: Եթե կարեւորը բազմամշակութայնությունն է, կարծում եմ՝ դա անպայման պարտադիր չէ, որ հանգեցնենք ինչ որ մի հանգրվանի:

### Ծանոթագրություններ

*1. Հայտնի է, որ Հեմշին բառը սովորական տեղանուն չէ: Քանզի զուտ աշխարհագրական առումով վերցնելուց բացի, օրինակ, Չամլըհեմշինի սահմաններում հանդիպում ենք որպես նստակյաց երկու ժողովուրդների՝ հեմշինցիների եւ լազերի: Հեմշինցիների եւ լազերի գյուղերի միջեւ հստակ տարբերություններ կան (Erhan G. Ersoy, Birikim, Etnik Kimlik ve Azinliklar, s 139-143, sayi: 65):*

*2. Peter Andrews, Turkiyede Etnik Gruplar, (181-184).*

*3. Mishael Meeker 1971 The Black Sea Turks: Some Aspects of Their Ethnic and Cultural Background (s-318-345). Մեջբերում Էրհան Գ. Էրսոյից. Մեեքերը նշում է, որ Արեւելյան խմբի հեմշինցիների մեջ հայերենը լավ է պահպանված: Հոպայի հեմշինցիների հայերենը Թուրքիայի հայերը գրեթե կարողանում են հասկանալ, իսկ Հոպայի հեմշինցիները մյուս հայերին բոլորովին չեն հասկանում:*

*4. Dumezil G. 1964 (P. Andrews, a.g.e).*

*5. Erhan G. Ersoy, Դաշտային աշխատանքների ընթացքում բավականին էթնոկենտրոն տարրեր են նկատվում միմյանց դիմելաձեւերի մեջ: Օրինակ՝ «լազը, որ սուրբ էլ լինի, քո բակում մի պահիր» նման արտահայտությունները տարածված են անգամ տարրական դասարանների աշակերտների շրջանում: Հեմշինցի մեծահասակները հաճախ են արտահայտում այն տեսակետը, որ լազերը քաղաքակրթությամբ իրենցից ցածր են, նրանց մեջ կան արյան վրեժի նման բարբարոսություններ, անկիրթ են, հին ժամանակներից եղել են անհավատ կամ ոչ-մահմեդական: Լազերն էլ հեմշինցիներին ներկայացնում են խաղամոլ, խմող, հայից շուռ տված մի ժողովրդի, եւ երկու համայնքների մշակութային շփման գծերում լուրջ մրցակցություն է տեղի ունենում (ինչպես, ասենք, պարկապզուկի* ուղեկցությամբ շուրջպարերում**):*

** Բնագրում՝ թուլում*

*** Բնագրում՝ հորան*

*6. Neal Ascherson, Karadeniz.*

** Լրագրող*

Թուրքերենից թարգմանեց
ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԸ

